Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

118

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

# ՀՍԽՀ
# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
# 1932 Թ. ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

368.5
Z-11

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

368.5
Z-11

2802-191

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

# ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1932 Թ. ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի 1932 թ. հունիսի 10-ի (Իզվեստիա 1932 թ. հունիսի 14-ի № 163) և ԱՍՖՍՀ Ժողկոմխորհի նույն թվի հունիսի 28-ի «Գյուղական վայրերում և քաղաքներում 1933 թ. պարտադիր կոպարային ապահովագրություն անցկացնելու մասին», վորոշումների հիման վրա Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

## ՀԱՏՎԱԾ I-ին
## Ի՞ՆՉ ԳՈՒՅՔ ՅԵՎ Ի՞ՆՉ ԱՂԵՏՆԵՐԻՑ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

### 1. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՒՅՔԸ

Ա. Կոլտնտեսություններում՝ (գյուղատնտեսական կոմունաներում, արտելներում և միասին հող մշակող ընկերություններում).

ա) Շենքերը, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունները (իրենց սարքավորումով), գյուղատնտեսական բարդ ինվենտարը, մեքենայացված տրանսպորտը և դաշտային ու խոտհարքային ամբողջ արտադրանքը (պարենային, սերմի և ապրանքային) — կրակից և հեղեղային տարերային աղետներից — հեղեղումից, յերկրաշարժից, փլուզումներից, սողումներից, մրրիկից և տարափից:

Ծանոթություն 1. Բարդ ինվենտարի և մեքենայացված տրանսպորտի միջոցներն են՝ 1) բոլոր սիստեմի տրակտորները, 2) բոլոր տեսակի տրակտորային և ձիու գութանները, 3) բոլոր սիստեմի շարքացան մեքենաները, 4) ձիու փոցխերը, 5) քաղհանները, սերմազտիչները, գուլուլազտիչները, տրիերները (զտիչները և հացահատիկի այլ զտիչ մեքենաները) 6) կոմբայնները, 7) հասարակ և բարդ կալսողները, 8) հնձողներն ու լոբոգրեյկաները, 9) քամհար մեքենաները, 10) խոտի մամլիչները, 11) մեքենայացված տրանսպորտը, 12) լոկոմոբիլներն և այլ մեքենայացված շարժիչները, 13) խոտհնձող մեքենաները, 14) խոտկապող մեքենաները:

Կոլտնտեսություններին իրավունք է վերապահվում պարտադիր կոպարային կարգով ապահովագրել և այլ գյուղատնտեսական ինվենտար ըստ կոլտնտեսության ցուցակացուցակի:

բ) Գյուղատնտեսական բուսական մշակույթները — կարկտահարությունից, նմանապես սառից և փոթորկից, վորոնք առաջացել են կարկտահարության հետևանքով.

գ) Առանձին տեսակի հատուկ և տեխնիկական բուսական մշակույթները — այն է՝ բամբակի, ծխախոտի, սոյայի, կենաֆի, գենագերչակի, քունջութի և արախիսի ցանքերը — անբերրիությունից:

դ) Կանեփի և կտավհատի ցանքերը — յերաշտից.

յե) Խոշոր յեղջյուրավոր անասունները — անկումից — մեկ տարեկան հասակից:

զ) Ձիերը, ջորիները, ուղտերը և ավանակները — անկումից՝ յերկու տարեկան հասակից.

է) Վոչխարները, այծերը և խոզերը — անկումից՝ 6 ամսական հասակից:

ը) Ցեղական անասունները - անկումից՝ վեց ամսական հասակից:

### Բ. ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(ըստ վոչ հանրայնացված գույքի)

Յերևանում, Լենինականում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և Գորիսում շենքերը և արդյու-

368.5 09 SEP. 2013 44.231

նաբերական ձեռնարկություններն իրենց սարքավորումով՝ կրակից, իսկ կոլտնտեսականների շենքերը—բացի կրակից, նաև հեղեղումից, յերկրաշարժից, փլուզումներից և սողումներից:

Հայաստանի բոլոր վայրերում՝

ա) Գյուղատնտեսական բուսական մշակույթները՝ կարկտահարությունից, նմանապես տարափից և փոթորկից, վորոնք առաջացել են կարկտահարության հետևանքով:

բ) Բամբակի, դեղին ծխախոտի, սոյայի, կենաֆի, գենագերչակի, քունջութի և արախիսի ցանքերն՝ անբերրիությունից:

գ) Կտավատի և կանեփի ցանքերը՝ յերաշտից.

դ) Խոշոր յեղջյուրավոր անասունները մեկ տարեկան հասակից՝ անկումից.

յե) Ձիերը, ջորիները, ուղտերը և ավանակները յերկու տարեկան հասակից՝ անկումից:

## ՀԱՏՎԱԾ 2-ՐԴ
## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

### Ա. Շենքերի, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունների

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

2. Շենքերի, գյուղատնտեսական ու արդյունաբերական ձեռնարկությունների (սարքավորման հետ), բարդ գյուղատնտեսական ինվենտարի, մեքենայացված տրանսպորտի, դաշտային ու խոտհարքային մարգագործության արտադրանքների, (պարենային սերմի և ապրանքային) վնասները վճարել նրանց լրիվ արժեքով՝ ըստ դույքացուցակի:

Կոլտնտեսություններն իրենց պատկանող շենքերը, արտադրական ձեռնարկությունները, սարքավորումը և ինվենտարը կարող են ապահովագրել նաև դույքացուցակի գներից ավելի բարձր, ֆինանսական մարմինների գնահատությամբ:

### ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

3. Յերևանում, Լենինականում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և Գորիսում շենքերի, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունների (սարքավորման հետ) վնասները վճարել հետևյալ չափով՝

ա) մենատնտես աշխատավորական տնտեսությունների վնասի լրիվ չափով՝ ըստ գնահատության.

բ) Գյուղհարկի անհատական կարգով կամ յեկամտահարկի № 3 դրույքատախտակով հարկադրվող տնտեսություններին՝ վնասի 50 տոկոսի չափով—ըստ գնահատության:

### Բ. Բուսական մշակույթների ապահովագրական վարձատրության չափը կարկտահարությունից

4. Գյուղատնտեսական բոլոր տեսակի բուսական մշակույթների (բացի բամբակից, ծխախոտից, սոյայից, կենաֆից, գենագերչակից, քունջութից և արախիսից) վնասները վճարել հետևյալ կայուն նորմաներով:

| Բուսական մշակույթների անունները | Նորմաները ռուբլիներով յուրաքանչյուր մեկ հեկտարից: Կոլեկտիվ տնտեսությունների համար | Նորմաները ռուբլիներով յուրաքանչյուր մեկ հեկտարից: Մենատնտեսների և կոլտնտեսակ. համար |
|---|---|---|
| **1-ին խմբին պատկանող մշակույթներ** | | |
| 1. Հացահատիկային (ցորեն, գարի, հաճար յեգիպտացորեն, կորեկ | 75 | 60 |
| 2. Բակլային (լոբի, սիսեռ, սորգո, վոսպ և այլն | 120 | 100 |
| 3. Արևածաղիկ | 175 | 125 |
| 4. Ցանովի խոտաբույսեր | 175 | 125 |
| 5. Սիլոսի մշակույթներ | 75 | 60 |



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ЗУОП-Арм ССР 56704-66

| Բուսական մշակույթների անունները | Կոլեկտիվ տնտեսությունների համար | Մենատնտեսների և կոլտնտեսակ. համար |
|---|---|---|
| **2-րդ խմբին պատկանող մշակույթներ** | | |
| 6. Բոստան | 500 | 400 |
| 7. Բանջարանոց | 500 | 400 |
| 8. Պտղատու այգիներ | 600 | 500 |
| 9. Թթենու ծառեր | 250 | 200 |
| 10. Խաղողի այգիներ | 600 | 500 |
| **3-րդ խմբին պատկանող մշակույթներ** | | |
| 11. Կարտոֆիլ | 175 | 125 |
| 12. Կերի արմատապտուղներ (ճակնդեղ ևն) | 175 | 125 |
| 13. Չալթուկ | 200 | 150 |
| 14. Այլ բուսական մշակույթներ | 175 | 125 |
| 15. Կտավատ և կանեփ (կարկտահարութ.) | 175 | 125 |

Ծանոթություն.— Աշտարակի, Վաղարշապատի, Ղամարլուի, Ղուրդուղուլու, Մեղրու, շրջանների և Յերևան քաղաքի խաղողի այգիների նկատմամբ սահմանվում են հատուկ նորմաներ, այն է՝ կոլեկտիվ տնտեսությունների համար 800 ռուբլի մեկ հեկտարից, իսկ կոլտնտեսականների և մենատնտես տնտեսությունների՝ 600 ռուբլի:

### Գ. Գյուղատնտեսական բուսական մշակույթների ապահովագրական վարձատրության չափը անբերրիությունից

5. Բամբակի, ծխախոտի, կենաֆի, գենագերչակի, քունջութի և արախիսի ցանքերը ապահովագրել անբերրիությունից հետևյալ կայուն նորմաներով և դրույքներով, անկախ նրանից, թե վոր շրջանում են գտնվում՝

| Բուսական մշակույթների անունները | Կոլտնտեսություններում, Նորմաները: Ցենտներ հեկտարից | Կոլտնտեսություններում, Նորմաները: Ռուբլի մեկ հեկտարից հաշվով | Մենատնտես և կոլտնտ. տնտեսություններում, Նորմաները: Ցենտներ հեկտարից | Մենատնտես և կոլտնտ. տնտեսություններում, Նորմաները: Ռուբլի մեկ հեկտարից հաշվով |
|---|---|---|---|---|
| 1. Բամբակ | 5,0 | 150 | 4,0 | 120 |
| 2. Ծխախոտ | 6,0 | 780 | 5,0 | 650 |
| 3. Սոյա | 6,5 | 100 | 4,5 | 70 |
| 4. Կենաֆ | 16·0 | 60 | 12.0 | 50 |
| 5 Գենագերչակ | 4,0 | 70 | 3,2 | 60 |
| 6. Քունջութ | 3,0 | 90 | 2,5 | 80 |
| 7. Արախիս | 6,0 | 650 | 4.5 | 480 |

Անբերրիությունից ապահովագրված բամբակի, ծխախոտի, սոյայի, կենաֆի, գենագերչակի, քունջութի և արախիսի ապահովագրական վարձատրությունը վորոշվում է այդ բուսական մշակույթների բերքի թերահավաքի արժեքի գումարով, հաշված մթերման կայուն գներով: Թերահավաքը համարվում է տվյալ տնտեսությունում ապահովագրված բուսական մշակույթի ամբողջ տարածությունից ստացված իրական բերքի և այս հոդվածում նշված նորմաների տարբերությունը:

### Դ. Կտավատի և կանեփի ապահովագրական վարձատրության չափը յերաշտից

6. Կտավատի և կանեփի ցանքերը ապահովագրել յերաշտից հետևյալ կայուն նորմաներով և դրույքներով, անկախ նրանից, թե վոր շրջանում են գտնվում՝

368.5
09 SEP. 2013

| Բուսական մշակույթների անունը | Կոլտնտեսություններում | | Մենատնտեսների և կոլտնտեսականների տնտեսություններում | |
|---|---|---|---|---|
| | Ցենտներ 1 հեկտարից | Ռուբլով 1 հեկտարից, ընդամենը | Ցենտներ 1 հեկտարից | Ռուբլով 1 հեկտարից ընդամենը |
| 1 Կտավհատ յերկարաթելային | | | | |
| ա) ծղոտ | 15,0 | 45 | 12,0 | 36 |
| բ) սերմ | 2,5 | 40 | 2,0 | 30 |
| 2 Կտավհատ բազմաճյուղ, սերմ | 3,0 | 45 | 2,5 | 37 |
| 3 Կանեփ | | | | |
| ա) ծղոտ | 25,0 | 75 | 20,0 | 60 |
| բ) սերմ | 4,2 | 100 | 3.4 | 80 |

Կտավհատի և կանեփի ապահովագրական վարձատրությունն յերաշտից վորոշվում է նրանց թերահավաքի արժեքի գումարով, հաշված մթերման կայուն գներով: Թերահավաք համարվում է տվյալ տնտեսությունում ապահովագրված կտավհատի և կանեփի ամբողջ տարածությունից ստացված իրական բերքի և այս հոդվածում նշված նորմաների տարբերությունը:

Այն դեպքերում, յերբ կտավհատի և կանեփի բերքի թերահավաքն առաջացել է այդ տարերային աղետներից, բացի յերաշտից, վնասն այդ տարերային աղետներից չի հատուցվում:

### 3Ե. Անասունների ապահովագրական վարձատրության չափը

7. Կոլեկտիվ, կոլտնտեսական և մենատն-

| Անասունների տեսակները | Անասունների ապահովագրվող հասակը | Հայաստանի բոլոր շրջաններում, բացի Ստեփանավանի և Աղբաբայի շրջաններից — Նորմաները ռուբլիներով | | Ստեփանավանի և Աղբաբայի շրջաններում — Նորմաները ռուբլիներով | |
|---|---|---|---|---|---|
| | | Կոլեկտիվ տնտեսություններում | Մենատնտես. կոլտնտեսական տնտեսություններում | Կոլտնտեսություններում | Մենատնտես. և կոլտնտես. տնտեսություններում |
| 1 Մատղաշ խոշոր յեղջ. անասուններ | 1 տ. մինչև 2 տ. | 50 | 45 | 60 | 55 |
| 2. Կովեր և ցուլեր | 2 տ. և բարձր | 90 | 80 | 100 | 90 |
| 3. Յեզներ | 2 տ. և բարձր | 90 | 80 | 100 | 90 |
| 4. Գոմեշներ և մատակներ | 2 տ. և բարձր | 120 | 110 | 120 | 110 |
| 5. Ձիեր և ջորիներ | 2 տ. և բարձր | 100 | 90 | 100 | 90 |
| 6. Ուղտեր | 2 տ. և բարձր | 100 | 90 | 100 | 90 |
| 7. Ավանակներ | 2 տ. և բարձր | 30 | 25 | 30 | 25 |
| 8. Վոչխարներ և այծեր | 6 ամ. և բարձր | 20 | — | 20 | — |
| 9. Խոզեր | 6 ամ. և բարձր | 50 | — | 50 | — |



տես տնտեսություններին պատկանող գյուղատնտեսական անասուններն ապահովագրել անկումից պարտադիր կարգով հետևյալ կայուն նորմաներով՝

8. Կոլեկտիվ տնտեսություններն իրենց պատկանող անասունները կարող են ապահովագրել պարտադիր կոպարային կարգով նրանց լրիվ արժեքով՝ ըստ գույքացուցակի, նույնպես և գույքացուցակում նշված գներից բարձր, ֆինբաժինների գնահատությամբ:

Կոլեկտիվ տնտեսություններում ցեղական և ազնվացրած անասուններն ապահովագրվում են անպայման նրանց լրիվ արժեքով:

9. Ապահովագրական այն վնասները, վորոնք տեղի կունենան 1933 թ. հունվարի մեկից հետո, վճարվում են այս վորոշման 2. 3 և 7 հոդվածներում նշված նորմաներով: Իսկ այն վնասները, վորոնք տեղի կունենան մինչև 1933 թ. հունվարի մեկը հատուցվում են ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1931 թ. հունիսի 30-ի վորոշման 3—9 հոդվածներում նախատեսված չափերով:

Անբերրիությունից ապահովագրված բուսական մշակույթները, նաև յերաշտից ապահովագրված կանեփի և կտավհատի մշակույթները, վորոնց վնասը տեղի կունենա նույնպես 1932 տարվա ընթացքում, վճարվում են սույն վորոշման 5 և 6-րդ հոդվածներում նշված չափերով:

10. Ապահովագրական վնասները հաշվվում և վճարվում են սահմանված նորմաների լրիվ գումարի չափով, յերբ գույքը վոչնչացել է ամբողջովին, իսկ յեթե գույքը վնասվել է մասնակի, վճարվում է միայն ապահովագրական նորմայի համապատասխան մասը:

11. Կոլեկտիվ, կոլտնտեսական և մենատնտես աշխատավորական տնտեսություններին հասանելիք պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական վարձատրությունից չի կարելի գանձել վորևէ գումար պետ. մարմինների, կոոպերատիվների և մասնավոր անձանց ապահովադրողի ունեցած պարտքերի դիմաց, բացառությամբ կոպարային ապահովագրության վճարումների և հատույթի:

Ապահովագրական վարձատրությունը տրվում է մեկ ամսից վոչ ուշ, հաշված տարերային աղետի մասին արձանագրության կազմելու որից:

## ՀԱՏՎԱԾ 3-ՐԴ
## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

### Կոլտնտեսություններում

12. Կոլտնտեսություններում շենքերը, արդյունաբերական ձեռնարկությունները (սարքավորման հետ), բարդ գյուղատնտեսական ինվենտարը, մեքենայացված տրանսպորտը կրակից, յերկրաշարժից, փլուզումներից և սողումներից, մրրիկից, տարափից ապահովագրելու համար սահմանել հետևյալ դրույքը՝

| ՎԱՅՐԵՐ | % ապահովա գումարից |
|---|---|
| ա) Յերևանում, Լենինականում, Նոր-Բայազետում, Վաղարշապատում, Դիլիջանում, Գորիսում և Ղարաքիլիսայում . . . . . . . . | 0,23 |
| բ) Մնացած վայրերում . . . . | 0,45 |

Ծանոթություն.— Կոլտնտեսություններին պատկանող դաշտային և խոտհարքային արտադրանքը (պարենային, սերմի և ապրանքային) սույն վորոշման առաջին հոդվածում նշված տարերային աղետներից ՀՍԽՀ սահմաններում ապահովագրվում են առանց ապահովավճար գանձելու:

### ՄԵՆԱՏՆՏԵՍ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

13. Յերևանում, Լենինականում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և Գորիսում մենատնտեսներին և կոլտնտեսականներին պատկանող շենքերի, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունների (սարքավորման հետ) ապահովագրական դրույքը սահմանել ապահովագումարի 0,50 տոկոս, կամ ապահովագումարի յուրաքանչյուր 100 ռ. 50 կոպեկ, իսկ գյուղհարկի անհատական կարգով կամ յեկամտահարկի № 3 գրույքաչափով հարկվող տնտեսությունների նկատմամբ ապահովագումարի 1,50 տոկոս կամ ապահովագումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց 1 ռուբլի 50 կոպեկ:

### ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԳՐՈՒՅՔՆԵՐԸ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

14. Բուսական մշակույթների ապահովագրական գրույքները կարկտահարությունից սահմանել հետևյալ կերպ (տոկոսներով).

| Բուսական մշակույթների անունները | Երևան, Կոտայք, Աշտարակ, Ղամարլու, Ղուրդուղուլի, Բեշքշրենդ, Վեդի, Միլրի, Վաղարշապատ | | | Սիսիան, Թալին, Ապարան, Արթիկ, Լենինական, Ազիզբեկով, Ղարաքիլիսա, Ստեփանավան, Ալահվերդի Իջևան, Դիլիջան, Շամշադին, Նոր-Բայազետ, Մարտունի, Բասարգեչար, Գորիս, Ղափան, Փաշալու, Ախտա | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Կոլտնտ. համար | Կոլտնտեսակ. և աշխատ. մենատնտ. համար | Կուլակ. և № 3 ցուց. հարկվող տնտ. համար | Կոլտնտես. համար | Կոլտնտ. և աշխատ. մենատնտ. համար | Կուլակ. և № 3 ցուց. հարկ. տնտ. համար |
| 1. Ցորեն, գարի, յեգիպտացորեն, հաճար, կարտոֆիլ, գետնախնձոր, ձավարեղեն, սիսեռ, լոբի, վիկա, վոսպ, սորգո, ցանովի խոտ, սիսոի մշակույթներ | 1,5 | 2,8 | 8,4 | 1,9 | 3,6 | 10,8 |
| 2. Բոստան և բանջարանոց (ձմերուկ, սեխ, վարունգ, բադրիջան, պամիդոր, ծիծակ, կաղամբ, և այլն) շալգամ, արևածաղիկ, խաշխաշ, կանեփ կտավհատ | 2,9 | 5,4 | 16,2 | 3,4 | 6,5 | 19,5 |
| 3. Պտղատու այգիներ, խաղողի այգիներ, թթենու անկարաններ | 3,4 | 6,5 | 19,5 | 3,8 | 7,5 | 22,5 |

15. Տեխնիկական բուսական մշակույթներն ապահովագրել անբերրիությունից հետևյալ դրույքներով

| Բուսական մշակույթների անունները | Կոլտնտեսությունների համար. | Մենատնտես տնտեսությունների համար | |
|---|---|---|---|
| | Տոկոսներ ապահովագումարից | Աշխատավոր և կոլտնտեսական | Կուլակային |
| | | տոկոս ապահովագումարից | Տոկոս ապահովագումարից |
| 1. Բամբակ | 2,2 տոկոս | 3,6 տոկոս | 10,8 տոկոս |
| 2. Սոյա, գենագիրչակ կենաֆ | 4,4 « | 7 56 « | 22,68 « |
| 3. Բունջութ, արախիս | 5,5 « | 8,4 « | 25,2 « |
| 4. Ծխախոտ | 3,3 « | 4,8 « | 14,4 « |

16. Կոլեկտիվ և մենատնտես աշխատավորական տնտեսություններին պատկանող կտավահատի և կանեփի ցանքսերն ապահովագրել յերաշտից առանց ապահովավճար գանձելու, իսկ կուլակային տնտեսությունների կտավահատի և կանեփի ցանքսերի ապահովագրության համար դրույքի չափը սահմանել 9 տոկոս ապահովագումարից:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ

17. Գյուղատնտեսական անասունների ապահովագրական դրույքները սահմանել հետևյալ կերպ.

| Անասունների տեսակները | Կոլեկտիվ տնտեսությունների համար | | Մենատնտես աշխատավորական և կոլտնտեսակ. համար | | Կուլակային և № 3 ցուցակով հարկվող տնտեսությունների համար | |
|---|---|---|---|---|---|---|
| | Երևան, Լենինական, Վաղարշապատ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Գորիս, Ն. Բայազետ | Մնացած վայրեր. | Երևան, Լենինական, Վաղարշապատ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Գորիս Ն. Բայազետ. | Մնացած վայրեր. | Երևան, Լենինական, Վաղարշապատ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Գորիս և Ն. Բայազետ. | Մնացած վայրեր. |
| 1. Խոշոր յեղջ. անաս. | 2,6 | 2,6 | 4.7 | 4,7 | 14,1 | 14.1 |
| 2. Ձիեր, ուղտեր, ավանակներ, ջորիներ | 4,2 | 4 2 | 9,0 | 8,2 | 27,0 | 24,6 |
| 3. Վոչխարներ, այծեր, խոզեր | 6.0 | 6,0 | — | — | — | — |

Ծանոթություն.— Կոլտնտեսությունների ապրանքային ֆերմաներում գտնվող խոշոր յեղջյուրավոր անասունների, խոզերի, վոչխարների ու այծերի ապահովագրական դրույքներից զեղչվում է 30 տոկոս:

Սույն վորոշման 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հատվածները հաջորդ համարում:

## ՀԱՏՎԱԾ 4-ՐԴ
## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ա. Կոլտնտեսություններ

18. Կոլտնտեսությունները ապահովագրական վճարումները մուծում են հետևյալ ժամկետներին՝

ա) մինչև 1932 թ. նոյեմբերի մեկը ապահովավճարի հիսուն տոկոսը.

բ) մինչև 1932 թ. դեկտեմբերի 15-ը ապահովավճարի հիսուն տոկոսը:

Բ. ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԸ

19. Աշխատավորական մենատնտեսների և կոլտնտեսականների ապահովագրական վճարումների մուծման ժամկետներն ըստ առանձին շրջանների սահմանվում են՝

ա) Յերևանի, Կոտայքի, Աշտարակի, Վաղարշապատի և Վեդիի շրջանների լեռնային մասի, Լենինականի, Արթիկի, Թալինի, Դիլիջանի, Իջևանի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մարտունու, Բասարգեչարի, Բեշքշենդի, Փաշալույի, Ստեփանավանի, Ղարաքիլիսայի, Շամշադինի, Նոր Բայազետի, Ախտայի, Ալահվերդու, Ազիզբեկովի, Ապարանի, Միլրու շրջանների համար՝

Առաջին ժամկետ—մինչև 1932 թ. սեպտեմբերի 20-ը պետք է գանձվի ապահովավճարի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետ—մինչև 1932 թ. նոյեմբերի մեկը պետք է գանձվի ապահովավճարի 30 տոկոսը:

Յերրորդ ժամկետ—մինչև 1932 թ. դեկտեմբերի մեկը պետք է գանձվի ապահովավճարի 20 տոկոսը:

բ) Ղամարլույի, Ղուրդուղուլու շրջանների և Աշտարակի, Կոտայքի, Վաղարշապատի և Վեդիի դաշտային մասերի համար՝

Առաջին ժամկետ—մինչև 1932 թ. նոյեմբերի մեկը պետք է գանձվի ապահովավճարի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետ—մինչև 1932 թ. դեկտեմբերի մեկը պետք է գանձվի ապահովավճարի 50 տոկոսը:

20. Գյուղհարկի անհատական կարգով և յեկամտահարկի № 3 դրույքատախտակով տարբաղրվող տնտեսություններն ապահովագրական վճարումները մուծում են լրիվ չափով մեկ ժամկետում, այն է՝ 1932 թ. սեպտեմբերի մեկից վոչ ուշ:

## ՀԱՏՎԱԾ 5-ՐԴ
## ՏՈՒՅԺԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Ապահովավճարները, վորոնք չեն մուծված սույն վորոշման 18, 19 և 20 հատվածներում սահմանված ժամկետներին՝ գառնում են հետաույթ և գանձվում են հարկեր գանձելու համար սահմանված կարգով:

44. 231

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР